ՔԱՐՀԱՏԻ—ԴԱՇՔՅԱՍԱՆԻ ՇՐՋԱՆ

99. ԽԱՉԱԿԱՊ ՂՈՒՇՁԻ ԳՅՈՒՂ ԵՎ ՇՐՋԱԿԱՅՔ

Գյուղում հին հուշարձաններ չկան, շրջապատում պահպանվել են մեծ հնություն ունեցող արձանագիր և անարձանագիր հուշարձաններ։ Վերջիններից հիշատակում ենք առայժմ գյուղից մոտ երկու կիլոմետր դեպի հյուսիս-արևմուտք գտնվող ավերակները, ուր մի շարքի կանգնած են լոթ խաչքարեր (մեկն ընկած է, մյուսները կոտրված և կեսն ընկած)։ Թեև ոչ մի արձանագրություն չկա դրանց վրա, բայց քանդակների ոճով վերաբերում են X—XI դարերին։

Մեր հավաքած արձանագրությունները հետևյալ վայրերից են։

Ա. Թարգմանչաց վանք. գտնվում է գյուղից մոտ երեք կիլոմետր հեռու, դեպի հյուսիս. բաղկացած է մի փոքր եկեղեցուց և ընդարձակ գավթից ու զանգակատնից։ Պարսպափակ բակում պահպանվել են այլ շինությունների հիմնապատերը։

Ըստ ավանդության, վանքը հիմնադրվել է Մ. Մաշտոցի ներկայությամբ, սակայն ներկայումս կանգուն շենքերը ոչ մի կերպ չեն առնչվում V դարի արվեստի հետ։ Այդ հնագույն շրջանին կարող է վերաբերել այն ստորերկրյա դամբարանը, որը գտնվում է բակում՝ հյուսիսային դարբասի դիմաց։ Դամբարանի վրա եղած շենքերն այժմ փլատակեր են նորության կնիքով, իսկ բուն դամբարանը համակ սրբատաշ և մեծամեծ քարերով շինված մի փոքր տարածություն է, ուր իջնելու համար շինված են նեղ աստիճաններ։ Անվանի նահատակների մասունքների վրա նման դամբարանների գոյությունը Արցախում հիշատակված է մատենագրության մեջ և ապացուցվում է իրական մնացորդներով (Ամարասի վանքում պահպանված է ամբողջությամբ, իսկ Մարդակերտ և Ճարտար գյուղերում մենք հայտնաբերեցինք ավերակներ և մնացորդներ)։

Եկեղեցին մի փոքր շենք է, գմբեթավոր, հարավից և հյուսիսից արտաքուստ կցված ավանդատներով։ Շինված է անտաշ քարերով. ունի բազմաթիվ նորոգումների և կարկատանների հետքեր, որոնց ընթացքում, որպես շինանյութ, օգտագործվել են բազմաթիվ խաչքարեր, որոնք վերաբերում են X—XVII դարերին։

Հուշարձանի պատերին երեք տեղով ագուցված են առանձնակի քարեր, որոնց վրա նշանակված է միևնույն :ՆԼԸ: (989) թվականը։ Դրանք հին արձանագրության մաս չեն, ըստ երևույթին նորոգումների ժամանակ ավերված հին հիշատակագրության փաստական արժեքը հաստատող վկայություններ են։ Նշված թվագրությունը համապատասխանում է եկեղեցու հին մասերի ճարտարապետական և կառուցողական արվեստի այդ շրջանի առանձնահատկություններին։ Նույն ժամանակներին վերաբերող մի բեկոր, վրան բարձրաքանդակ վիշապով, ագուցված է եկեղեցու արևելյան պատի վերին մասում, պատուհանի մոտ։ Նույն տեղում ագուցված է նաև կլոր պատուհանի մի բեկոր, որն ունի հնագույն քանդակների գոտի։ IX—X դարերի արվեստով զարդարված մի խաչքար էլ ագուցված է հյուսիսային ավանդատան արևելյան պատին, ներքուստ։

Գմբեթը ցածր է, ութկողմանի, նույնպես շատ նորոգումների ենթարկված. ըստ երևույթին ամենամեծը XVI—XVII դարերում, որովհետև նրա ստորին մասի ամբողջ շարքը, ներքուստ, բաղկացած է այդ դարերին վերաբերող 28 խաչքարերից։ Թեև դրանց մեծ մասն ունեն հիշատակագրություններ, բայց բարձրության և տեղի նեղության հետևանքով անկարելի եղավ վերծանել։

Վանքի գավիթը շինված է 1890 թ., իսկ զանգակատունը՝ 1856 թ. (ըստ արձանագրությունների, որոնք չենք առնում)։

Վանքը շրջափակված է պարսպով, որը մեծ մասամբ այժմ ավերակ է։ Ավերակ են նաև բակում եղած օժանդակ շենքերը։

Բ. Շատախ գյուղատեղ. այս գյուղատեղի հուշարձաններն անխնա կերպով թալանվել են շրջակա գյուղերի բնակիչների կողմից, նախ՝ Խաչկապի բնակիչներից։ 1965 թ. հերկի ժամանակ հայտնաբերվել է մի խաչքար՝ 981 թվականով։

Շատախ գյուղը շեն է եղել մինչև 1625 թ.։ Այդ թվականին քահանա Յովհաննէսը նորոգել է մի հին ձեռագիր ավետարան և գրել իր հիշատակարանը[1]։

Գ. Սվրեցիք գյուղատեղ. գտնվում է Խաչկապից արևմուտք՝ Շամքոր գետի աջ ափին։ Գյուղատեղում մնացել են հիմնապատերը միայն։ Ձորի մյուս լանջին տարածվում է գերեզմանատունը, ուր կան մի քանի խաչքարեր և տապանաքարեր։ Բարխուդարյանցի այցելած ժամանակ եկեղեցու խորանը և ավանդատները եղել են կանգուն, իսկ գերեզմանատանը գըտնվել են կենցաղային տեսարաններով բազմաթիվ տապանաքարեր[2]։

Սվրեցիք գյուղատեղից մոտ երեք կիլոմետր դեպի Խաչկապ, մի բլրի գագաթին կիսականգուն մնում են մի հին և անշուք եկեղեցու մնացորդները. կանգուն են միայն պատերի կեսը։ Խորանների արևելյան պատերի մեջ կան մեծ և պարզ խաչքարեր՝ X դարին բնորոշ ոճով։ Եկեղեցու շուրջը մնում են հին Զակլիկ գյուղի ավերակները և գերեզմանատունը։

ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՎԱՆՔ

924. ԵԿԵՂԵՑՈՒ հարավային ավանդատան արևմտյան պատի վերին մասում, միայն թվական. 1 տող.



:ՆԼԸ: (989):

Հրատ. Բարխուդարեանց, 289, Լալաեան, V, 340, Լուսանկ. 133

925. ԳԱՎԹԻ հարավային պատի արևմտյան վերին մասում, միայն թվական. 1 տող.



:ՆԼԸ: (989):

926. ԳԱՎԹԻ հյուսիսային պատի վերին մասում, միայն թվական. 1 տող.



:ՆԼԸ: (989):

927. ԽԱՉՔԱՐ, ագուցված է դավթի արևմտյան որմնամույթի մեջ, քիվը տաշած թևերի շուրջը և ստորին մասում, կիսաեղծ 4 տող.

ՈԼԵ

ՏՐԱՌԱՖԵԼԱՌ . . . . :ՈԼԵ: (1186): |ՏԻ՛. ԱՌԱՔԵԼ ԱՌ՚ԱՉՆՈՐԴ՚| ՍԲ.
ՍԲՈՒԽՏԻՍԿԱՆԳ . . . ՈՒԽՏԻՍ ԿԱՆԳ՚ՆԵՑԻ՚| ՉԽԱՉՍ:
ՉԽԱՀՍ . . . .

928. ԽԱՉՔԱՐ, դրված է հյուսիսային ավանդատան արևմտյան պատի միջի ակնատին որպես ծածկ, արտաքուստ, երևում է 2 տող.

ՍԲԱԿ ՍԲ. ԱԿՈԲ:
ՈԲ

Ծանոթ. Քանդակների ոճը XII դարի է։

---

[1] Բարխուդարյանց, 279,
[2] Նույն տեղում, 299,

929. ԽԱՉՔԱՐ, ագուցված է եկեղեցու թմբուկի արևմտյան քիվի մեջ. մնում է միայն թվականը. 1 տող.

ԹՎՊՀԲ . . . . ԹՎ.ԻՆ. :ՊՀԲ: (1423):

930. ԽԱՉՔԱՐ, փոքր, ագուցված է եկեղեցու արևելյան լուսամուտի մոտ, սրտաքուստ, թվերի շուրջը միայն թվականը. 2 տող.



ԹՎ.ԻՆ. :ՌԵ: (1556):

931. ԽԱՉՔԱՐԵՐ, երկու հատ. դրված են հարավային ավանդատան լուսամուտի գլխին, որպես ծածկ. մեկի վրա թերի թվական.



ԹՎ.ԻՆ. :Ռ . . :

932. ԽԱՉՔԱՐ, ագուցված է գավթի հյուսիսային պատի մեջ, ներքուստ. թվերի շուրջը միայն թվականը.

ՌԼԷ :ՌԼԷ: (1588):

933. ԽԱՉՔԱՐ, փոքր, ագուցված է եկեղեցու արևելյան պատի մեջ, արտաքուստ. թվերի շուրջը միայն թվականը. 2 տող.



ԹՎ.ԻՆ. :ՌԻԵ: (1576):

934. ԽԱՉՔԱՐԵՐ, երկու հատ, դրված են հարավային ավանդատան արևելյան լուսամուտին որպես ծածկ. մեկի թվերի շուրջը 2 տող.

ԹՎ.ԻՆ. :ՌԽԵ: (1596):

935. ԽԱՉՔԱՐ, կանգնած է պարսպից դուրս, հարավ-արևմուտք. քիվին և ներքևի գնդի շուրջը 3 տող.

ՍԲԽՍԲՐԷԽՍԷՅՈՀԱՆԻՍԻՀԳՆԱՄԷՆ ՍԲ. ԽԱՉՅՍ ԲԱՐԷԽԱԻՍ Է ՑՈՎԱՆԻՍԻ ՀԱՅՈՅ-
ԳՈՑՆ ԱՄԷՆ:| ԹՎ.ԻՆ. :ՌԾԷ: (1608):

936. ԽԱՉՔԱՐ, դրված է դավթի ներսում, հարավային խորշի մեջ. ճակատին և թևերի շուրջը 4 տող.

ԵՍ··ԵՊՍԿԱԿՆԵՑԻՉԽՀՍ ԵՂԲՐՈՐԴՈՅՆԻՄՈՅԱԼԷՔՍԱ ՆՈՍԱԲ ԵՂԻՆ	ԵՍ . . . . . ԵՊԼԻՍԿՈՊՈՅՍ ԿԱԼՆՅԿՆԵՑԻ ՉԽԼԱՅՉՍ| ԵՂԲՐՈՐԴՈՑՆ ԻՄՈՑ ԱԼԷՔՍԱՆՈՍ ԱԲԵՂԻՆ:

937. ԽԱՉՔԱՐ, ագուցված է թմբուկի արևելյան պատին, ստորին մասում թերի 1 տող.

ԻՓՐԿՈՒԹԻՀՈԳՈԱՄՈՒՍՆՈՒՄՈ···	Ի ՓՐԿՈՒԹԻ. ՀՈԳՈ ԱՄՈՒՍՆՈ ԻՄՈ . .

938. ԽԱՉՔԱՐ, փոքր, ագուցված է թմբուկի գագաթին, 1 տող.

··ԽՀՍԲՐԷԽՍԱԿՈԲԻՆ	ՍԲ. ԽԼԱՅՉՍ ԲԼԱՅՐԷԽԼԱԻՅՍ ԱԿՈԲԻՆ.

939. ԽԱՉՔԱՐ, ագուցված է թմբուկի արևելյան պատին. քիվին 1 տող.

ՍԲԽՀԲՐԷԽՍՎ·ՐԴ··ԻՆ	ՍԲ. ԽԼԱՅՉՍ ԲԼԱՅՐԷԽԼԱԻՅՍ ՎԼԱՅՐԴԼԱՆՅԻՆ:

940. ԽԱՉՔԱՐ, փոքր, ագուցված է թմբուկի հարավային պատին, քիվին միայն մի անուն՝

ԹՈԹԱԿ	ԹՈԼԻՅԹԱԿ.

941. ԽԱՉՔԱՐԵՐ, քսանութ հատ, դրված են թմբուկի ստորին շարքում. ներքուստ. մեծ մասի վրա կան արձանագրություններ, որոնք անհարմարությունների պատճառով հնարավոր չէ վերծանել։

ԲԽՀՍԲՐԷԽՍԳԱՀՐԻՆ	ՍԲ. ԽԼԱՅՉՍ ԲԼԱՅՐԷԽԼԱԻՅՍ ԳԱՒՀԼԱՅՐԻՆ:

ՇԱՏԱԽ ԳՅՈՒՂԱՏԵՂ

942. ԽԱՉՔԱՐ, մեծ և պարզ, գտնվել է 1965 թ. գյուղատեղի մոտ, «Նահատակի ձոր» կոչվող հանդամասում. ճակատին 4 տող.

ՀԵԹՈՒՄ ԿԱՆԳԵԱ ՉՀԽԱՉՍ :ՆԼ:	ՀԵԹՈՒՄ| ԿԱՆԳԼՆՅԵԱ|Ց ՉԽԱՉՍ.| :ՆԼ: (981)։

Ծանոթ. Գծագիրն ստացանք Խաչկապի գյուղացի Դալլաքյան Սուրենից։ Նամակում հիշատակում է, որ խաչքարի բարձրությունը մեկուկես մետրից ավելի է, իսկ լայնությունը՝ մեկ մետրից ավելի։

943. ԽԱՉՔԱՐ, Շատախի ավերակներից բերվել և կանգնեցվել է Խաչկապ գյուղից գեպի Թարգմանչաց վանք տանող ճանապարհի եզրին. ստորին մասում 4 տող.

ԵՍԴԱԱԹԱՐՍԿԿԵՑԻԶԻՉՍԻՆՃԵՒ
ԾՆՈՂԱՑԻՄԻՍՊԱՏԻԱՐԻՆԷԼՄԻՆ

ԵՍ ԴԱՒԱԹԱՒՐՍ ԿԱՆԿՆԵՑԻ ՁԽԱՅԶՍ ԻՆՁ ԵՒ ԾՆՈՂԱՑ ԻՄ ԻՍ-ՊԱՏԻԱՐԻՆ, ԷԼՄԻՆ։ :ՋՀԵ: (1526):

Ծանոթ. *Էլմին անունը թեական է, որովհետև բնագրում սղված է՝ վրան պապիվ կա։*

944. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, օրորոցաձև, հարավային կողին կենցաղային տեսարան. բերված է Շատախ գյուղատեղից և օգտագործված նոր ննջեցյալի վրա՝ Խաչկապի գերեզմանատան մեջ. արևմտյան ճակատին 8 տող.

ԲՈՒԷ
ԵՍՍԱՐՔ
ԻՍԿԱՎ-
ԱՅԼԱՆՈ
ՎՍԿԿԵՑԻ
ՁԽՆՍԲԱ··
ԽԱՍՈՐԴ
ՈՆԻՄՈՅ

ԹՎԻՆ։ :ՌԷ: (1558)։ ԵՍ ՍԱՐՔԻՍ, ԿԱՄԱՅՎՆ՝ ԱՑ · · · · ։ ԿԱՆՅԿՆԵՑԻ ՁԽԱՅԶՍ ԲԱՐԷԽԱԻՍ ՈՐԴՈՑՆ, ԻՄՈՑ։

945. ԽԱՉՔԱՐԵՐ, ութ հատ, բերված են Շատախի ավերակներից։ Խաչկապ գյուղից դուրս «Գոմեր» վայրում ջրի գուռ են շինել. միայն մեկի վրա կա թվականը՝

ԲՈՒԼԸ

ԹՎԻՆ։ :ՌԼԸ. (1589):

ՍՎՐԵՑԻՔ ԳՅՈՒՂԱՏԵՂ

946. ԽԱՉՔԱՐ, կանգնած է «Սվրեցիք» գյուղատեղի գերեզմանատան մեջ. ճակատին 1 տող.

ՍԲ ԽՍԲՐԽՍ · ՌԱ.

ՍԲ. ԽԱՉՅՍ ԲԱՅՐԷՅԽԱԻՅՍ · · · :ՌԱ: (1552):

947. ՏԱՊԱՆԱՔԱՐ, նույն տեղում, հարավային երեսին կենցաղային քանդակներ. արևմտյան ճակատին 6 տող.

ՍԲ Խ · · ·
Ս Բ · · ·
ՍԵՍԻՆ ՌՂ
ՀԳՈՆ

ՍԲ. ԽԱՉՅՍ ԲԱՐԷԽԱԻՍ ՆԵՐՍԵՍԻՆ ՀԼՈՅԴՈՑՅՆ, :ՌՂ: (1641):

Ծանոթ. *Թվականը գտնվում է հայելանման իրի վրա։*

948. ԽԱՉՔԱՐԵՐ, երեք հատ, իրար կից, նախորդների մոտ. միայն մեկի քիվին պահպանվել է

ՍԲ · · ՀՍԲԱՐԵԽԱԻՍ ՍԲ. ՐԽԱՉՍ ԲԱՐԵԽԱԻՍ:

949. ԽԱՉՔԱՐ, նախորդների մոտ, ամբողջ երևսին.

ԵՍԲԷԿԻԽԱ
ԹՈՒՆ
ԿԱԿԵ
ՅԳԽ
ՄԿ ՍԳ

ԵՍ ԲԷԿԻ ԽԱ|ԹՈՒՆ| ԿԱ|Ն|Կ|Ն|Ե|Ց|Ի| ԶԽ՚ԱՉՍ՝.
ՄԿ|ՐՏԻՉ| Ս|ԱՐ|Գ|ԻՍ|:

950. ԽԱՉՔԱՐ, գտնվում է ավերակ եկեղեցու մոտ, քիվին մնացորդ

· · · ԲԱՐ · · ՂՀՄԻՆ ՐՍԲ. ԽԱՉՍ՝ ԲԱՐԷԽԱԻՍ՝ Շ|Ա|Հ|ՈՒ|ՄԻՆ.

951. ՏԱՊԱՆԱՔԱՐ, վոքր, օրորոցաձև, նույն եկեղեցու մոտ, արևելյան ճակատին 5 տող.

ՄԲ
ԽԷՍ · · ·
ԱՐԽՍ
Շ · ՀՈ
ՆՄԻՆ

ՍԲ. ԽԼԱ|ՉՍ ՐԲ՚ԱՐ|Է|ԽԼԱ|Ի|Ս՝ Շ՚Ա՚Հ՚ՈՒՄԻՆ.

952. ԵԿԵՂԵՑՈՒ լուսամուտին որպես ծածկ դրված տապանաքարի վրա եղել է.

Թվ. :ՉԻԲ: (1473). Ես Համզա կանգնեցի զխաչս ուղղոյ իմոյ Պապի.

Հրատ. Բարխուդարեանց, 299։ Լալաեան, V, 312։

953. ՆՈՒՑՆ ՏԵՂՈՒՄ մեկ ուրիշ տապանաքարի վրա.

Ես Համզա կանգ|նեցի| զխաչս ուղղոյ իմոյ Էվատին:

Հրատ. Բարխուդարեանց, 299։

954. ԽԱՉՔԱՐ, գեղաքանդակ, գտնվելիս է եղել Սվրեցոց գերեզմանատան մեջ. ճակատին՝

Սբ. խաչս Թումանին, Պէկաչին. թվ. :Պ: (1351):

Հրատ. Բարխուդարեանց, 299։

955. ԽԱՉՔԱՐ, նախորդի մոտ. պատվանդանի վրա քանդակված է եղել գութան, մաճկալ, հորիկ քշողներ և կաթսայով ճաշ բերող կին, խաչքարի վրա եղծված՝

Սբ. խաչս բարեխաւս գիչնին. կանկնե · · ·

956. ՏԱՊԱՆԱՔԱՐ, նախորդների մոտ.

Սբ. խաչս Հուսիփսիմի, Մարտիրոսին։

Հրատ. Բարխուդարեանց, 300։

957. ԽԱՉՔԱՐԵՐ, երկու հատ, կանգնած են եղել նույն գերեզմանատնից քիչ հեռու՝ Մաղրում գտել, վայրում, մատուռի մոտ, մեկի վրա.

Սբ. խաչս բարեխաւս Խամբկին ելոյգոյն։

Մանոր. Հրատարակիչը վերջին երեք տառերը՝ ՆՀԳ առանձնացրել է որպես թվական, ճիշտ չենք համարում։

Հրատ. Բարխուդարեանց, 300։

958. ՏԱՊԱՆԱՔԱՐ, դանվում է նախորդների մոտ.

Ես Եղում կանգնեցի խաչս Նատարին։

Հրատ. Բարխուդարեանց, 300։

100. ՄԵԾ ԲԱՆԱՆՑ ԳՅՈՒՂ, ԵՎ, ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԱՆԱՊԱՏ

Գյուղամիջում, լերկ ժայռի վրա կանգնած են իրար կից երկու եկեղեցիներ. դրանցից արևմտյանը թաղածածկ, փոքր և ավելի հին շենք է, իսկ արևելյանը շինված է 1863 թ.։ Այս նոր եկեղեցու շինության ժամանակ, որպես շինանյութ, օգտագործել են հարյուրից ավելի խաչքարեր. դրանց մեծ մասը դրել են պատերի վերին մասում և ձևավորել որպես քիվ, ապա բեմի կորության, ինչպես և պատուհանների ձևավորման համար։ Մի քանի ավելի մեծ և ղեղաքանդակ խաչքարեր փոխադրվել են եկեղեցի և մնում են պատերին հենած։ Այդ խաչքարերի մեծագույն մասը շինված է սպիտակավուն կրաքարից։ Կարճ հիշատակագրություններ ունեն միայն քիվերի վրա։

Մեր տեսածներից հինն ունի 1556 թվականը։

Գերեզմանատուն. գտնվում է գյուղի արևմտյան կողմի սարալանջին. ընդարձակ է, ունեցել է հին մաս, որտեղ մնացած մի խաչքարն ունի 1477 թվականը։

Թարգմանչաց անապատ. գտնվում է գյուղի արևելահարավային կողմում, ձորամիջի հարթության վրա։ Հնում այն եղել է ավելի վերևում, որից չնչին հետքեր են մնացել. ներկա շենքը կառուցված է 1630 թ., անտաշ քարերով փոքր շենք է։ Հարավային մուտքի դիմաց շինված է փոքր զանգակատուն, որի զանգի վրա գրված է.

Ցիշատակ է Ապովի որդի խոնայ Ղազարին. ի դուռն Բանանցայ սուրբ անապատին. թվ. :ԻՃԺԶ։ (1667):

Հրատ. Բարխուդարեանց, 295։

Հնում այս անապատում և գյուղի եկեղեցու մեջ պահվել են մոտ 15 ձեռագիր ավետարաններ, պատմական բովանդակություն ունեցող կարևոր հիշատակարաններով[1]։

Այս գյուղից մեր ունեցած 62 արձանագրություններից 54-ը հրատարակվում են առաջին անգամ։

ՀԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐՍՈՒՄ ԴՐՎԱԾ ԽԱՉՔԱՐԵՐ

959. ԴՐՎԱԾ ԲԵՄԻ ԱՌԱՋ, ճակատին Մարիամ, գրկին Հիսուս. առաջին երկու թագազարդ և գավազանակիր մարդիկ. շրջանակի մեջ ևս երեք մարդ. քիվին և մարդկանց կողքերին 3 տող.

· · ԷՍ ԱԳՆԱԿԱՆ ՋԻՆԱՅ
Ի՛Ն Թ Վ
Ո Ե

[Սբ. ԽԱՉՍ ԱԳՆԱԿԱՆ ՋԻՋԱՑ|Ի՛Ն. Թվ|ին]
:ՌԵ։ (1556):

[1] Ցալալեանց, I, 167։ Բարխուդարեանց, 278—284։